ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՁՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզիԿաթնաջուր
համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.Կաթնաջուր, 13 փող. 1, Հեռ.
(099) 000302 , katnajur.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

ԿԳԵ-184
27 սեպտեմբեր 2019թ.

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ղեկավարի 2019թ.-ի սեպտեմբերի 23-ի թիվ 27 որոշումը:

Առդիր՝ 1 (մեկ) ֆայլ:

Invalid signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՊԱՊՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱԹՆԱՋՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Կաթնաջուր համայնք,
գ. Կաթնաջուր 13 փողոց, 1 շենք
հեռ. +374 99-00-03-02

ՈՐՈՇՈՒՄ
«23» ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019Թ. ԹԻՎ 27

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՅՈՒՐԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ՈԼՄՎ Սպիտակի բաժնի կողմից 23.08.2019թ.-ին ստացված թիվ 61/8-4294 գրությունը, ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ղեկավար Արմեն Պապոյանի, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Վիոլետա Վարդանյանի, համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արմեն Նիկողոսյանի, համայնքի ղեկավարի տեղակալ Մանվել Ռստակյանի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 23-ին կազմած վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը՝ Յուրա Վոլոդյայի Ռուշանյանի Կաթնաջուր համայնքի համայնքային սեփականություն համարվող 7 փողոց 25 տան հարակից տարածքում շինություն ինքնակամ կառուցելու մասին և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 7 փողոց 25 տան հարակից տարածքում (կադաստրային ծածկագիր 06-052-0048-0001) համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի այլ նպատակային նշանակության հողամասում շինություն ինքնակամ կառուցելու համար, Կաթնաջուր համայնքի բնակիչ Յուրա Վոլոդյայի Ռուշանյանին (ծնված՝ 23.01.1968թ.-ին) ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով՝ չորս հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Կաթնաջրի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Յուրա Վոլոդյայի Ռուշանյանին:

3. Յուրա Վոլոդյայի Ռուշանյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Յուրա Վոլոդյայի Ռուշանյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Պապոյան